



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մայիսի 2014 թվականի N Մ-413-Ա

«ՀԱՅԿԿԱԿԱՆ ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ԿՈՂՄԻՑ 2014 – 2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼՈՒՅՄ՝  
ՀԱՅԻ ԱԶՔԵՐԻՆ» (յոթերորդ փուլ) ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 16-ի N 3/3.8-2/5970-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 18 -ի N 02/2564-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի ապրիլի 25-ի N ԴԴ/22/3678-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի ապրիլի 17-ի N ՖԲ/ԱնՄ-4/2560 - 14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 16-ի N ՎՄ/3-4/4579-14 ու Երևանի քաղաքապետի 2014 թվականի ապրիլի 18-ի N 02/10-22285-հ, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2014 թվականի ապրիլի 15-ի N 101/104.3.2/1757-14, Հայաստանի Հանրապետության Տավուշի 2014 թվականի ապրիլի 16-ի N 01/14.1/1218-14 մարզպետի եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է .**

1. Բարեգործական որակելի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Վրացական 9, բն. 44, ՀՎՀՀ՝ 00074765) 2014 թվականի ապրիլից մինչև 2016 թվականի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում իրականացվող՝ 900,000,000 դրամ ընդհանուր արժեքով «Լույս՝ հայի աչքերին» (յոթերորդ փուլ) ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայկական ակնաբուժության նախագիծ» (ՀԱՆ) բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Լիկվոր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01201697) 2014 թվականի մարտի 28-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2016 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում բժշկական սարքավորումների և դեղորայքի ձեռքբերում՝ 5,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05507136) 2014 թվականի մարտի 3-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի մարտի 3-ից մինչև 2016 թվականի 20-ն ընկած ժամանակահատվածում բժշկական պարագաների և դեղորայքի ձեռքբերում՝ 4,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Լիոն Փրինթինգ Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01829254) 2014 թվականի մարտի 1-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ընդհանուր

հետազոտության հարցաթերթիկների և նյութերի տպագրում՝ 2,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00100064) 2014 թվականի ապրիլի 1-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հանրակրթական ֆիլմերի և իրազեկման հոլովակների նկարահանման ծառայությունների մատուցում՝ 3,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Մաստերկոմպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01566751) 2009 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N MCS04/2009 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակազմային տեխնիկայի վերանորոգման և սպասարկման ծառայությունների մատուցում՝ 800,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Օրանժ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00098599) կնքված՝ N 2316125 և 2699016 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2016 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում «Ինտերնետ» ցանցի ծառայությունների մատուցում՝ 150,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի և բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Յուրոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) կնքված՝ N 027/30/08/2012 պայմանագրի 2014 թվականի փետրվարի 28-ի համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2016 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում «Ինտերնետ» ցանցի մալուխային կապի ապահովում և տեխնիկական սպասարկում՝ 500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի ու ՀԱՆ-ի ակնաբուժական կրթական կենտրոնի գրադարանի «Ինտերնետ» ցանցի ծառայությունների մատուցում՝ 480,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

8) «ԱրմենՏել» ՀԶ՝ ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2005 թվականի ապրիլի 15-ին կնքված՝ N 010510380 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2016 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2009 թվականի ապրիլի 16-ին կնքված՝ N 07-0098-7 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2016 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում գրա-սենյակի ջրամատակարարում՝ 120,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Հայրուսգազարդ» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված՝ N 015.08.13.1836 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում հիմնադրամի գրասենյակի գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 2,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

11) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Արևմուտք» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի հունվարի 24-ին կնքված՝ N 6303 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2016 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 1,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

12) «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01538458) 2010 թվականի մարտի 9-ին կնքված՝ պայմանագրի 2014 թվականի մարտի 31-ի N 02 համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2016 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ՀԱՆ-ի գրասենյակի հաշվապահական ծառայությունների մատուցում՝ 5,040,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3. «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճեն-

ները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳ



ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ